

Ս.Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌՈՒՍԱՅ ԼԵԶՎԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԼՍԱՐԱՆՈՒՄ
ԴՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐՈՇ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտարկվում է ռուսաց լեզվի՝ որպես ոչ մայրենի լեզվի դասավանդման ընթացքում դարձվածքների ուսուցման խնդիրը: Վերլուծվում են դարձվածային միավորների ընկալման դժվարության պատճառները: Առաջարկվում են հայկական լսարանում դարձվածքների գործնական ուսուցման որոշ մեթոդներ:

Առանցքային բառեր. դարձվածաբանության, դարձվածային միավոր, ունակություններ, գործնական կիրառում, համարժեք, իմաստային ընդհանրություն:

S.S. MARTIROSYAN

THE ISSUES ON THE PHRASEOLOGY OF THE RUSSIAN LANGUAGE
AND SOME METHODS OF TEACHING IT

The necessity of studying phraseology in the process of teaching Russian as a foreign language is considered. The causes of difficult comprehension of phraseological units are analyzed. Some methods of teaching, mastering and applying phraseological units in the Armenian - speaking groups of students are studied.

Keywords: phraseology, phraseological units, skills, practical application, equivalent, semantic unity.

ՀՏԴ 81'373.613

Վ.Մ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ 13-ՐԴ ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Քննության են առնվել հայերեն ձեռագրերի 13-րդ դարի հիշատակարաններում արձանագրված օտար ծագման այն բառերը, որոնց օտար լինելը գիտակցվում է հայերենի զարգացման բոլոր փուլերում:

Առանցքային բառեր. ձեռագիր, հիշատակարան, փոխառություն, օտար բառեր, գրիչ (ձեռագիր ընդօրինակող):

Ներածություն: Հայերեն ձեռագրերի 13-րդ դարի հիշատակարաններում [1] արձանագրված օտար ծագման բառերը բաժանելի են երկու հիմնական խմբի՝ 1) **էկզոփիկ** կամ, ինչպես Ֆ. Խլղաթյանն է անվանել, **տարաշխարհիկ** բառեր [2], որոնց գործածությունը անխուսափելի է, և 2) օտար բառեր, որոնք, տարածված լինելով ժամանակի խոսակցական լեզվում, գործածվել են հայերեն համարժեքների փոխարեն: Այդ բառերը հիշատակարաններում առկա են զանազան հնչյունատարբերակներով, որը պայմանավորված է թե՛ տարբեր լեզուներում և թե՛ բարբառներում

դրանց տարբերությամբ: Մեր այլ ուսումնասիրություններում [3], անդրադառնալով նախորդ դարերի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարին, նկատի ենք առել նաև փոխառությունները, որոնք հիմնականում հունարենից, մասամբ էլ արևելյան լեզուներից փոխառյալ բառեր են: Իսկ ինչ վերաբերում է 13-րդ դարի հիշատակարաններին, սրանցում տեղ են գտել մեծ թվով ֆրանսերեն, իտալերեն բառեր, որոնք գործածվել են Կիլիկյան Հայաստանում և այնտեղ բնակվող գրիչների կամ առհասարակ տարբեր հիշատակագրողների միջոցով արձանագրվել հիշատակարաններում: Այնուհետև նկատվում են արաբերեն, պարսկերեն և թուրքերեն բառեր: Վերջիններս հիմնականում այնպիսիք են, որոնք միաժամանակ հատուկ են եղել նշված երեք լեզուներին էլ, որի հետևանքով բառարաններում որոշակի հստակություն չկա լեզուներից որևէ մեկից փոխառյալ լինելու վերաբերյալ:

Օտար բառերի գործածությունը 13-րդ դարի հիշատակարաններում: Ձեռագիր ընդօրինակողները՝ գրիչները, կամ առհասարակ հիշատակարան գրող անհատները (նաև ստացողները, պատվիրատուները և այլք) հիշատակագրելիս հետևել են գրաբարյան օրինաչափությանը՝ հնարավորինս զերծ մնալով նաև օտար բառերի գործածությունից: Սակայն աստիճանաբար այդպիսի մոտեցումը խախտվել է, նաև կանոնավոր կրթություն չունեցող և գրաբարին լավ չտիրապետող անհատներ են հիշատակարաններ գրել, այդպիսով և տուրք տվել ժամանակի խոսակցական լեզվին և վկայել օտար բառեր, որոնք լայնորեն գործածել են իրենց առօրյայում: Բացի դրանից, ինչպես վկայում է է. Մկրտչյանն իր աշխատության մեջ [4], գրաբարյան այլ աղբյուրների համեմատությամբ խոսակցական իրողությունները առավել մեծ չափերի են հասնում հիշատակարաններում, քանի որ նրանցում կենցաղային մանրամասներ են հաղորդվել: Ահա և սրանով էլ պայմանավորված է կենցաղային բնույթի օտար բառերի մուտքը 13-րդ դարի հիշատակարաններ, չնայած որ դրանք բավական սակավ են 14-րդ դարի հիշատակարաններում գործածված օտար բառերի համեմատությամբ: Պետք է փաստել, որ յուրաքանչյուր հաջորդ դարի հիշատակարաններում առավել ազատ և անկաշկանդ են գործածվել հայկական կենցաղ ներթափանցած օտար բառերը, սակայն, դրան զուգահեռ, հիմնականում պահպանված են գրաբարյան քերականական կանոնները:

Օտար բառերը հիշատակարաններում գործածվել են կա՛մ տվյալ իմաստն ունեցող բնիկհայերենյան, կա՛մ վաղուց մեր լեզվում արմատավորված փոխառյալ համարժեք բառերի առկայության, կա՛մ էլ, բնականաբար, դրանց գործածության անխուսափելիության պարագայում. վերջիններս փոխատու լեզվի պետական, մշակութային զանազան հասկացությունների (ազգային տիտղոսներ, կոչումներ ևն) վերաբերող անվանումներ են, նույն տարաշխարհիկ բառերը, որոնք քննվող օտար բառերի շարքում ամենամեծ թիվն են կազմում:

13-րդ դարի հիշատակարաններում վկայված օտար բառերից սակավ օրինակներ տրված են ՆՀԲ-ում [5], բայց և՛ միջինհայերենյան շրջանի այլ բնագրային աղբյուրների վկայություններով: Դրանք հիմնականում արձանագրված են ՀԱԲ-ում [6] և ՄՀԲ-ում [7]՝ կա՛մ հիշատակարանի, կա՛մ մեկ այլ աշխատության բնագրային վկայությամբ, ապա որոշ օրինակներ առկա են նաև «Ակնարկներ...» աշխատության [8] փոխառյալ բառերի ցանկերում:

Կոչում, տիտղոս, պաշտոն նշանակող բառեր՝

Ջանջլեր – ՀԱԲ-ում վկայված է *ջանսլեր* տարբերակը. բառահոդվածում նշված է, որ հայտնի է եղել *ջանցլեր* ձևով նույնպես, ծագում է ֆր. *chancelier* բառից, որը նշանակում է «արդարադատության նախարար, կնքապահ»: Նշված տարբերակները տրված են նաև ՄՀԲ-ում՝ «պալատական աստիճանավոր» բացատրությամբ. «ըստ արքունական պատույ՝ **ջանջլեր** առաջի թագաւորին Հայոց Լևոնի»: Այն համապատասխանում է նույն *կանցլեր* բառին, որն առկա է արդի գերմաներենում «վարչապետ» նշանակությամբ, ուսերեւում որպես պետական պաշտոնյաներին տրվող բարձրագույն աստիճան և մի շարք այլ լեզուներում: Հիշատակարանում վկայված հնչյունական տարբերակը եթե պատահական վրիպակ չէ, ապա հետևանք է առնմանությամբ պայմանավորված հնչյունափոխության, որը հատուկ է բարբառային-խոսակցական լեզվին: **Սենեկալ** // **սէնէհջալ** – ՄՀԲ-ում արձանագրված են *սենեկալ*, *սենէսկալ* և *սենեսջալ* բառերը, որոնք, ըստ նշված բառարանի, ծագում են հֆր. *senescal*-ից, ընդ որում՝ առաջին երկուսը բացատրված են «պալատական մատուցակ», իսկ վերջինը՝ «արքունի գանձապետ»: Սովորաբար բառարաններում միևնույն բառի հնչյունատարբերակները կա՛մ մի բառահոդվածում են տրվում, կա՛մ էլ հղվում են բառարանում առկա մյուս տարբերակները, սակայն հիշյալները առանձին են տրված, հղում չի կատարվել, և մեկը այլ բացատրությամբ է տրված, թեև այն չի բխում բառարանում առկա միակ բնագրային վկայությունից: *Սենեսկալ* արձանագրվել է նաև ՀԲԲ-ում [9], որի մոտ նշված է. «հին ֆր. *senescal*, այժմ *sénéchal*, պալատական մատուցակ, բարձր պալատական պաշտօնեայ», ապա նաև՝ «Բուրխենանների Ժամանակ բարձր պալատական պաշտօնեայ, արքունի գանձապետ»: Հիշատակարաններում արձանագրվել են թե՛ հֆր. և թե՛ նոր տարբերակները՝ երկուսն էլ նույն գրիչի կողմից՝ տարբեր ընդօրինակությունների հիշատակարաններում. «զամէնայմեծ **սենեկալն** Հայոց զպարոն Աւշին՝ որդի ամենայմեծ սպարապետին Սմբատայ», «Ես Աւշին **սէնէհջալս** ամենայն Հայոց»: **Գուղուսպապլ** – *գունդսպապլ* բառի տարբերակային դրսևորումներից է: ՆՀԲ-ում բացատրված է «ախոռապետ»: Ըստ ՀԱԲ-ի՝ < իտ. *contestabile*, հֆր. *conestable*, ֆր. *connétable*, ասոր. *qōntōstabl*, որոնք էլ իրենց հերթին ծագում են լատ. *comes stabuli* ձևից, որն է «կոմս ախոռոց»: ՄՀԲ-ն մեկնում է հայերենում հայտնի իմաստով՝ «սպարապետ, ավագ իշխան»: **Քրինծ** – ՆՀԲ-ում նշված է լատ., իտ. ծագումը, բացատրված «իշխան»,

իսկ ՀԱԲ-ում նաև հավելված են ֆրանսերենն ու գերմաներենը: Ըստ ՀԱԲ-ի՝ այն առաջացել է լատ. *princeps* «առաջին, նախկին, զլխավոր» բառից և նշանակում է «իշխան»: ՄՀԲ-ում տրված են նաև «իշխանորդի, թագաժառանգ» իմաստները. «որդի **բրինձին** Անտիոքայ Ռեմդին», «ի **բրինձ** Պրմընդին ժամանակ», « որ ընդ տերութեամբ **բրինձին**»: **Սիր** – ՀԱԲ՝ «արքայ, իշխան» < ֆր. *sire* «տէ՛ր արքայ», որ ծագում է լատ. *senior* «ծերագույն» բառից. «ի նացմէ և իր որդոյն **սիր** Սիմունին պարգևել»: **Մարաջախար** – ՀԱԲ՝ «իշխան, զօրավար» (գործածական դարձաւ նոր գրականում՝ իբր ֆր. *maréchal*) = հֆր. **mareschal* բառից փոխառեալ է Ռուբինեանց ժամանակ. այս բառը իր հերթին փոխառել է հգերմ. *marahscale* «ծիապան» բառից».
մարաջախարըն Հայոց՝ զբարետիպ եղբայրըն մեր Լևոն», «ի հալեալ արդեանց ստացաւ զսա՛ Աւշին **մարայջախար** Հայոց» ևն: **Պապրոն** – ՀԱԲ՝ «միջնադարեան իշխանական մի աստիճան» < ֆր. *patron* «պատրիկ, պաշտպան, պետ» (ծագում է լատ. *patronus* հոմանիշից). «զԱստուծով մեծացեալ զմեծ **պապրոնն** զՎախտանգն յիշեցէք» ևն: **Պայլ** – ՆՀԲ՝ բառ գաղղ. և իտ. «անուն պատուոյ տուեալ մեծի իշխանին հայոց ի ֆռանկաց», ՄՀԲ՝ հֆր. *bail* 1. Մեծ իշխան, 2. Կիլիկյան շրջանում պարոնի կամ ասպետի փոխանորդ. «զոր և **պայլ** իսկ եղ Հայոց»: **Սորապելապ** – ՄՀԲ՝ *սորապել* < հուն. «զորավար». «յիշել աղաթիւք... և բարի **սորապելապն**՝ զպարոն Յուշապն»: **Ումբրուր** – Արձանագրված է ՄՀԲ-ում՝ հղված **ըմբրուր** < ֆր. *empereur* «կայսր». «յորոց և **ումբրուրն** Ֆռանգաց, կայսրն Յունաց, առաքեցին նմա թագ և գանձ բազում»:

Պետական, դատաիրավական համակարգին վերաբերող բառեր՝

Հուքմ – ՄՀԲ՝ արբ., թրք. «իրաման, վճիռ». «ու այլ մարդ չկարէ **հուքմ** արնել»: **Ասախ** – ՀԱԲ՝ «օրէնք» < թրք. *yasaq*. «զաւրացուցանէր զազգն Իսմայելի իր պեղծ **ասախովն** ի վերայ քրիստոնէից»: **Անսիզ** – ՀԱԲ՝ «օրէնք» < ֆր. *assises*. «զ**Անսիզն** զպարոնութեան մայրաքաղաքին Անտիոքայ»: **Ջալունջ** – ՀԱԲ՝ «դատական բողոք, գանգատ» < հֆր. *chalonge*. «Ոչ իմոյ և ոչ ատարաց ունի իշխանութիւն **ջալունջ** առնել»: **Լիճ** – Ակնարկներ՝ հֆր. «վասալ, ենթակա». «զիր **լիճ** ճորտերուն»:

Կրոնական-եղեցական կյանքին վերաբերող բառեր՝ պենդեկոսպէ // պենդակոսպէ < հուն. «50-րդ օրը՝ սկսած Զատիկի կիրակիից», **յինդիկպիոն** // **ընդիքպիոն** < հուն. «15 տարվա մի շրջան», **մղպեսի** // **մղդսի** < արբ. *muğdesi* «Երուսաղեմ ուխտի գնացած քրիստոնյա», **փեղամպար** < պրսկ. «մարգարե» և այլն:

Քանի որ հիշատակարաններում արձարծվել են գրին, զրջությանը և գիրք ծաղկելուն առնչվող հարցեր, ուստի նաև գործածվել են համապատասխան իմաստային խմբին պատկանող օտար բառեր: Այսպես. ըստ ՀԱԲ-ի՝ **նշաստակ** -ը նույն պրսկ. *nišāsta* «օսլայ» բառն է, «սրանից է համառօտուած արբ. *nišā*, որից և հայ. **նշայ** «օսլայ»: Ըստ Երևոյթին՝ երկուսն էլ գործածվել են տարբեր դարերի, մասնավորապես 13-րդ դարի հիշատակարաններում՝ որոշ դեպքերում բարբառային

հնչյունափոխությամբ կամ բաղադրության կազմում. «Յիշեսցիք և զԱմուլս հոգեւոր եղբայր մեր, եւ զծնողսն նոցայ, որ **զնշաշտակս** ետուն Աւետարանիս»: «Իսոշորութեան գրոյս չմեղադրել, զի թուխթս յաննշա է»: ՄՀԲ-ում տրված է *աննշայ* բառը 15-րդ դարի հիշատակարանի միակ վկայությամբ. «Այս թուղթս ու մէկ այլն *աննշայ* է», սակայն բացատրված է «անպետք, անորակ»՝ բնականաբար ելնելով բառային միջավայրից բխող ենթադրությունից, մինչդեռ նշանակում է «առանց օսլայելու»: **Նաղաշ** - ՀԱԲ՝ «նկարիչ» < արբ. *naqqāš* «զարդանկարիչ». «յիշեսցիք ի Քրիստոս.... զԸհծեր **նաղաշն** եւ զծնողսն իւր»: **Ջընջուֆր** - ՀԱԲ՝ *qhinǰuḫir* «կինաբարիս կոչուած կարմիր ներկը» < արբ. *zunǰufr*, Ակնարկներ՝ արբ.՝ *qhinǰuḫir* (*qhinǰenǰir*) «խրուկ, կարմիր ներկ», ՄՀԲ՝ «կինաբար, խրուկ, ծծմբասնդիկ, կարմրադեղ, սուսր». «Եւ զՊետրոս, որ զայս **զընջուֆրս** շնորհեաց, յիշեսցիք ի Քրիստոս»: **Ջաբիսպր** - ՀԱԲ՝ «նորագիւտ բառ. գործածուած է 1338 թ. գրուած մի Աստուածաշնչում՝ < հֆր. *chapistre* > ֆր. *chapitre* < լտ. *capitulum* «գրքի գլուխ». «Համար ֆռանկին, որ **ջաբիսպր** կոչեն, որ ի վերա ամենայն Աստուածաշնչին ճապղած է». փաստորեն այս բառն ավելի վաղ է արձանագրվել, քան ՀԱԲ-ի վկայությունն է:

Գրիչները հիշատակարաններում հաճախ տեղեկություններ են հաղորդում ժամանակի ռազմական գործողությունների մասին: Հետևաբար փոխառությունների մի մասն էլ վերաբերում է իմաստային տվյալ շերտին: Այսպես. **սղար** - ՀԱԲ՝ «պաշարումն» = շրջուած է *խսար* բառից, որ փոխառեալ է արաբերէնից». «նստել յաթոռ պարոնութեանն և պնդել **զսղար** բերդին Լամբրունի», **նաղմ** - ՀԱԲ՝ «ական պատերազմի, *mine*» < պրսկ. *naγm*, որից և՛ **նաղմել**, **նաղմափոր**. «փորեալ **նաղմեցին** զքար բերդին իբրեւ զհող», «**սղարեալ** բաբանօք ի վերուստ և քարափոր ծակամտօք՝ **նաղմելով** նեղեալ ի ներքուստ», «քարահատ արուեստականօք և **նաղմափոր** դարանամտօք»:

Օտար ծագման բառերի մի խումբն էլ ներկայացնում են «ունեցվածք, ընծա, ժառանգություն» նշանակող բառերը: Պետք է նկատի առնել, որ գրիչները կամ տվյալ ձեռագրերին որևէ առնչություն ունեցող անհատներն իրենց հիշատակարաններում հաճախ են նշում ձեռագիրը այս կամ այն վանքին նվիրաբերելու, որպես ժառանգություն թողնելու մասին՝ գրական վկայագիր հաղորդելով համապատասխան իմաստով օտար անվանումներին, որոնք սովորական են եղել ժամանակի խոսակցական լեզվում: Այսպես. **ոխվ** - ՄՀԲ՝ արբ., պրսկ. *vaqf*, *vağf* «կրոնական հաստատությանը՝ եկեղեցուն նվիրված անշարժ կալվածք՝ գույք՝ առարկա». «ստացայ զսուրբ Աւետարանս յիմ **հալալ** ընչից և եդի **ոխու** ի Սուրբ Կիրակոս», «ու գիրքս **ոխվ** կենայ ի վանքս. և մի /ոք/ իշխեսցէ զսա ծախել, գրաւ դնել կամ աւժտել», **պռոյք** - ՄՀԲ՝ հուն. «օժիտ, բաժինք», **միրայթ** - ՄՀԲ՝ *mīrāp* (որ և՛ *mīrāsa*, *mīrāq*) < արբ. *mirās*, պրսկ. *miras* «ժառանգություն». ըստ երևույթին՝ ՄՀԲ-ի միակ վկայությունը ավանդված է 13-րդ դարի բանաստեղծ Ֆրիկի կողմից. «Ոչ ի հօրէ

առեր *միրաթ*»։ «Բայց մի ոք իշխեսցե՛լ ածտել զսա եկեղեցոյս կամ *պոռոջ* տալ, կամ ումեք *միրաթ* հանել, այլ մնայ յայս եկեղեցիս ի Սուրբ Թորոս»։ *մուլք* – ՄՀԲ՝ արբ., թրք. *mülk*, պրսկ. *molk* «անշարժ գույք, կալվածք, ունեցվածք, կարողություն»։ «Եւ սուրբ Աւետարանս *մուլք* է Ստեփանոսին, որ այլ մարդոյ *դաւի* չելի»։ *դալաթ* – ոչ թե *դալաւ* (արբ. «սխալ, սխալմունք») բառն է, այլ նույնանում է *խալաթ* բառին, որը վկայված է ՄՀԲ-ում՝ արբ., պրսկ. *xāl'āt* «իբրև նվեր տրված թանկագին հագուստ», այսինքն՝ նույն *խալաթ* բառն է, որ այսօր էլ գործածում ենք հայերենում՝ որպես «տանը կամ աշխատանքի ժամանակ հագնելու երկար ու լայն վերնագգեստ», *դիլայ* – ՄՀԲ՝ *խիլայ* <ասոր. *xila* «պարգև, ընծա. իբրև նվեր տրվող զգեստ»։ «բերին ածիտս մեծագին և պատուական զգեստուց *դալաթ* և *դիլայ* անձին թագաւորին»։

Պետք է հավելել նաև հետևյալ բառերը, որոնք վերաբերում են առօրյա կյանքին. *խապազ* – ՄՀԲ՝ արբ. *xabbāz* «հացագործ»։ «Արհնեայ Քրիստոս Աստուած Թորոս *խապազն* որ եղև միաբան Սուրբ Աստուածամարն», *մուխապրայ* – ՄՀԲ՝ արբ. *muxāṭara*, պրսկ. *moxatāre* «վտանգավոր»։ «և ի *մուխապրա* կենացս մերոց երկուցեալք»։ Մի քանի բառեր ավելի վաղ են վկայվել հայերենով գրված գործերում։ Դրանք մինչև օրս էլ հարազատ են մեր առօրյա-խոսակցական լեզվին կամ բարբառներին, այսպես. *հալալ* < արբ., պրսկ., թրք. «արդար, ազնիվ»։ «ի *հալալ* և յարդար արդեանց», «ի *հալալ* արդեանց ստացաւ զսա՝ Աւշին մարայջախտ Հայոց», *հարամի* < արբ. «ավազակ»։ «Պիղծ *հարամիք* տարան գերի...», *հաւաս* < արբ. «ցանկություն, իղծ»։ «Եւ ինքն վասն իմ սիրոյս և *հաւասիս* ինձ պարգևեաց, և ես աշխատեցայ և փոխեցի ի Հայ լեզու», *սինաւ* < հուն. «սահման»։ «մինչև ի *սինաւն* Վրաց» և այլն։

Եզրակացություն։ Աշխատանքում ներկայացված որոշ օրինակներ, ըստ բառարանային տվյալների, հայտնի են ավելի ուշ շրջանի գործերի բնագրային վկայություններով։ Վերհանված մի քանի բառատարբերակներ անգամ արձանագրված չեն համապատասխան բառարաններում։ Առանձին դեպքերում առկա են ոչ ճիշտ բացատրություններ։ Անշուշտ, աշխատանքում քննված բառապաշարը կարող է իր նպաստը բերել հայոց լեզվի, մասնավորապես միջին հայերենի պատմությանը՝ նշված բնագավառում եղած բացը մասամբ լրացնելու առումով։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դարեր, աշխ. Ա. Մաթևոսյանի, Եր., 1988։
2. **Խլղաթյան Ֆ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, Եր., 2009։
3. **Խաչատրյան Վ.**, 5-11-րդ դարերի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2013, էջ 39-49, 12-րդ դարի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը, Լրաբեր, մաս 3, ՀՊՃՀ-80, Ճարտարագետ, Եր., 2014, էջ 803-809։

4. Մկրտչյան Է., Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980:
5. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837(ՆԲՀ):
6. Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, Եր., 1971-1979 (ՀԱԲ):
7. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009 (ՄՀԲ):
8. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Եր., 1972 (Ակնարկներ):
9. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944-1945 (ՀԲԲ):

В.М. ХАЧАТРЯН

ПРИМЕНЕНИЕ ИНОСТРАННЫХ СЛОВ В КОЛОФОНАХ XIII ВЕКА

Рассматриваются иностранные слова, зарегистрированные в колофонах XIII века. Эти слова были осознаны на всех стадиях развития армянского языка.

Ключевые слова: рукопись, колофон, заимствование, иностранные слова, переписчик.

V.M. KHACHATRYAN

APPLICATION OF FOREIGN WORDS IN THE 13 TH CENTURY COLOPHONS

The foreign words registered in the 13 th century colophons have been considered. These words have been recognized at all the stages of development of the Armenian language.

Keywords: manuscript, colophon, borrowing, foreign words, copier.

УДК 81'1

К.А. МАРКАРЯН

ФУНКЦИОНАЛЬНЫЙ ПРИНЦИП ИЗУЧЕНИЯ ЯЗЫКОВЫХ ЕДИНИЦ КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ДЛЯ ОСУЩЕСТВЛЕНИЯ РЕЧЕВОГО ОБЩЕНИЯ (Капан)

Отмечается важность формирования иноязычной коммуникативной компетенции студентов, что подразумевает умение вступать в реальное общение, выбирая языковые средства исходя из конкретной ситуации общения. Реализация функционального принципа изучения языковых единиц развивает у студентов чувство стиля, что очень важно при речетворческой деятельности.

Ключевые слова: иноязычная коммуникативная компетенция, функциональный подход к изучению единиц языка, текстообразующие возможности языковых единиц, лингвостилистический анализ текста.

Формирование и развитие иноязычной коммуникативной компетенции студентов независимо от выбранной специальности – актуальная проблема в практике преподавания иностранного языка. Коммуникативная компетенция подразумевает осведомленность в правилах построения текста и отборе языковых средств.